

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Ս/թ ապրիլի 4-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը Կապան համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 32 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր տասնհինգ, աշխատանքի տեղավորման՝ տասնմեկ, բնակարանով ապահովելու, ավերված շենքի փոխհատուցման, կացարանի սեփականաշնորհման, տանիքի վերանորոգման, հողամասի հատկացման՝ դպրոցում տիրող իրավիճակի կարգավորման խնդրանքով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից տասներկուսին տրվել է դրական լուծում, երեք դիմում գտնվում է ուսումնասիրման փուլում:

Բավարարվել է աշխատանքի տեղավորման մասին մեկ քաղաքացու խնդրանք, մնացած դիմումները վերցվել են հաշվառման և ուսումնասիրվում են դրանց լուծման հնարավորությունները:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում են բնակարանով ապահովման, ավերված շենքի փոխհատուցման, կացարանի սեփականաշնորհման, տանիքի վերանորոգման, հողամասի հատկացման, դպրոցում տիրող իրավիճակի կարգավորման վերաբերյալ դիմումները:

ՀՀ Սյունիքի մարզպետարան